ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

25 մարտի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

34
(3243)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՌԱՔԱՆԻՆ ՏՈՒՆ ՉԻ ՀԱՄՆՈՒՄ

Վերջին ամիսներին քաղաքացիներից ստացվող բազմաթիվ ահազանգերը ցույց են տալիս, որ Temu հարթակից կատարվող գնումների առաքման գործընթացում փոփոխություններ են տեղի ունեցել, որոնք դժգոհության առիթ են դարձել: Գնորդների փոխանցմամբ՝ նախկինում լայնորեն կիրառվող դռնից դուռ առաքման փոխարեն ավելի հաճախ առաջարկվում է առաքանին ստանալ փոստային բաժանմունքից, ինչը, նրանց խոսքով, հակասում է առցանց գնումների հիմնական տրամաբանությանը՝ հարմարավետությանը:

«Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան՝ «Հայփոստ»-ը պարզաբանել է, որ Temu-ից կատարված գնումների առաքումը իրականացվում է երկու տարբերակով՝ «տուն առաքում» եւ փոստային բաժանմունքից ստացում (pick-up): Ընկերությունից նշել են. «Temu հարթակից կատարված գնումների առաքումը, որի իրականացումը վերապահված է նաեւ «Հայփոստ» ՓԲԸ-ին, իրականացվում է երկու եղանակով՝ «տուն առաքում» ծառայության եւ ստացման կետից վերցնելու (pick-up) միջոցով: Հաճախորդը առաքման եղանակը ընտրում է պատվերի գրանցման ժամանակ»:

Միեւնույն ժամանակ, ընկերությունը պարզաբանել է, որ նույնիսկ տուն առաքման ընտրության դեպքում առաքանին կարող է հայտնվել փոստային բաժանմունքում, եթե առաքիչը չի կարողացել այն հանձնել հասցեատիրոջը. «Տուն առաքման եղանակով, երբ առաքիչը պատվերը հասցնում է առաքանու վրա նշված հասցեով, հանձնման անհնարինության դեպքում (հաճախորդի բացակայություն, հեռախոսազանգերին չպատասխանել եւ այլն) առաքանին ուղարկվում է տվյալ հասցեն սպասարկող փոստային բաժանմունք, որտեղ այն պահվում է 14 օրացուցային օր»:

Ստեղծված իրավիճակը ցույց է տալիս, որ առաքման պայմանների վերաբերյալ առավել թափանցիկ եւ հստակ հաղորդակցությունը շարունակում է մնալ առանցքային խնդիր՝ հատկապես այն պայմաններում, երբ միջազգային առցանց հարթակներից գնումները Հայաստանում շարունակում են աճել: Եւ այստեղ է, որ իշխող ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի տիկինը՝ Շուշան Ալեքսանյանը, անելիք ունի: «Հայփոստ»-ի տնօրենը ոչ միայն բարձր աշխատավարձ ստանալու համար է, այլեւ քաղաքացիներին պատշաճ ծառայություններ մատուցելու պարտավորություն ունի:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ»-ը ուսումնասիրել է Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Վաղարշակ Ամիրխանյանի՝ 2024 թվականի հայտարարագիրը եւ պարզել մի շարք ուշագրավ տվյալներ: Մասնավորապես, լինելով Եղվարդի ավագանու նախկին անդամ՝ իր պաշտոնավարման հետ կապված հնարավոր կապերի շնորհիվ կարողացել է համեմատաբար կարճ ժամանակում ձեռք բերել մի քանի անշարժ գույք նույն համայնքում: Տեղեկացնենք, որ Վաղարշակ Ամիրխանյանը պաշտոնին նշանակվել է 2021 թվականի մայիսի 25-ին: Մինչ պետական պաշտոն զբաղեցնելը նա հիմնականում զբաղվել է մասնավոր գործունեությամբ եւ տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատանքով: «Ժողովուրդ» օրաթերթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պաշտոնյան հայտարարագրել է 4 միավոր անշարժ գույք՝ հիմնականում Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքում գտնվող հողամասեր, ինչպես նաեւ բնակարան Երեւանում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահները օրերս խուզարկել են ահաբեկչության հոդվածով կալանավորված երիտասարդի տունը եւ այնտեղից տարել են հեռախոս, համակարգիչ, սակայն որեւէ կասկածելի իր չեն հայտնաբերել ահաբեկչության քրեական վարույթին առնչվող: ArmLur.am-ը արդեն տեղեկացրել էր, որ այս տարվա մարտի 6-ին Երեւան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի բնակիչ, 1994 թվականին ծնված Ռաֆֆի Մանդալյանը հրավառ շշեր էր նետել ՀՀ Ազգային անվտանգության ծառայության վարչական շենքի վրա: ArmLur.am-ը նաեւ բացահայտել էր երիտասարդի գործողության շարժառիթները: Մասնավորապես, գրել էինք, որ Ռաֆֆի Մանդալյանը իրավապահներին ցուցմունք է տվել, բացատրել, որ իր քայլը պայմանավորված է եղել խորը զայրույթով եւ հիասթափությամբ: Նա նշել է, որ իրեն մտահոգում է հայրենիքի անվտանգության վիճակը, եւ, իր համոզմամբ, հասարակության մեջ առկա է անտարբերություն, լռություն այդ հարցի շուրջ:

⇨ ***էջ 4***

Երեքշաբթի հրապարակված «Ճշմարիտ խոստում 4» գործողության շրջանակում տարածված 46-րդ հայտարարության մեջ ԻՀՊԿ-ն նշել է, որ «սիոնիստական ռեժիմի մանկասպան բանակը», օգտվելով տարածաշրջանում ստեղծված ռազմական իրավիճակից եւ Իրանի դեմ ԱՄՆ-ի ու Իսրայելի նախաձեռնած պատերազմի վրա կենտրոնացած լրատվամիջոցների ուշադրությունից, լայնածավալ ռազմական հանցագործություններ է իրականացրել Լիբանանի եւ Պաղեստինի քաղաքացիական բնակչության նկատմամբ՝ «անցնելով բոլոր կարմիր գծերը»: Հայտարարության մեջ ընդգծվում է, որ նման գործողությունների շարունակությունն անընդունելի է, եւ ԻՀՊԿ-ն զգուշացնում է, որ դրանց շարունակման դեպքում Իրանը եւ ԻՀՊԿ-ն «առանց որեւէ սահմանափակման» կհարվածեն հակառակորդի ուժերի կուտակման վայրերին՝ հյուսիսային օկուպացված Պաղեստինում եւ Գազայի հատվածում:Միաժամանակ հիշեցվում է, որ ԱՄՆ-ն եւ Իսրայելը լայնածավալ ռազմական գործողություններ են սկսել Իրանի դեմ՝ փետրվարի 28-ին Իսլամական հեղափոխության առաջնորդ Այաթոլլա Սեյեդ Ալի Խամենեիի, ինչպես նաեւ բարձրաստիճան զինվորականների եւ քաղաքացիական անձանց սպանությունից հետո:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՄԵՆՔ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՒՄ ԵՆՔ ԱՊՐՈՒՄ»

ArmLur.am լրատվականի հետ զրույցում Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Ալխաս Ղազարյանն անդրադարձավ վերջերս Երևանի մետրոյում Նիկոլ Փաշինյանի եւ արցախցի՝ Արմինե Մոսիյանի միջեւ տեղի ունեցած միջադեպին:

-Տիկին Ղազարյան, անցած կիրակի ձեր ներկուսակցական քարոզի ժամանակ Նիկոլ Փաշինյանը վիճեց արցախցի Արմինե Մոսիյանի հետ, նախ՝ բարկացավ, ապա մատ թափ տալով՝ նրան եւ ողջ արցախցիներին «փախածներ» անվանեց եւ ասաց, որ «ՀՀ քաղաքացիների միլիարդավոր հարկերի հաշվին ուզում էիք ապրել Արցախում»: Ձեր գնահատականը կատարվածի վերաբերյալ՝ եւ քաղաքական, եւ բարոյական առումով:

-Նախ՝ պետք է հասկանանք, որ մենք ժողովրդավարական երկրում ենք ապրում, ժողովրդավարական երկրի ղեկավարն էլ այնպիսի մարդ է, ինչպես բոլորս եւ երբեւէ չի խուսափել քաղաքացիների հետ ուղիղ շփումից: Դուք գիտեք, որ վերջին ժամանակներս նույնիսկ ուղիղ եթերով մենք ուղիղ շփվում ենք մեր քաղաքացիների հետ, եւ, բնականաբար, քաղաքացիներից կարող են լինել արձագանքներ, որոնք որ իրապես քաղաքացիներն էլ կարողանում են իրենց էմոցիաներով եւ ամեն ինչով արտահայտվել: Մենք թույլ ենք տալիս իրենք արտահայտվեն, նույնիսկ այնտեղ, երբ քաղաքացին ասում է, որ Հայաստանն իրեն պետք չի եւ այլն, բնականաբար, խոսույթի ընթացքում կարող է դիմացինն էլ երբեմն բարձր խոսել եւ այլն: Եկեք դուք մի՛ շեշտադրեք այդ հանգամանքը, որովհետեւ մենք պետք է սա ճիշտ հասկանանք, որ քաղաքացիների հետ շփումները ցանկացած մեր առօրյա կյանքում էլ կարող են երբեմն լինել ուրախ նոտայով, երբեմն բարձր նոտայով, երբեմն ցածր նոտայով: Կարեւորը՝ դրանք կան, դրանք առկա են, եւ մեր այդ շփումները շարունակվելու են: Մենք չենք խուսափելու նաեւ առաջիկայում նույնիսկ Երեւանի այլ վարչական շրջաններում հանդիպել մեր քաղաքացիներին: Իրականում դա մի քիչ անսովոր բնույթ է կրում, որովհետեւ տարիներ շարունակ մեր քաղաքացիների ուղիղ շփում որեւէ մեկի հետ, առավել եւս երկրի ղեկավարի հետ չի եղել: Դրա համար արդեն վարչապետը ներողություն խնդրել է: Ես կարծում եմ, որ պետք է սպասենք դիմացի կողմից էլ ներողություն լինի, որովհետեւ ի վերջո խոսում էր երկրի ղեկավարի հետ: Սա իրականում կլիներ ճիշտ քաղաքացու քայլ եւ ճիշտ շփում:

-Տիկին Ղազարյան, նախ նկատենք, որ տվյալ քաղաքացին պարզապես նշել է, որ ինքն Արցախից է եւ հրաժարվել է վերցնել ՀՀ այն քարտեզը, որ Փաշինյանն էր առաջարկում նրան՝ առանց Հայաստանի մասին վատ արտահայտվելու: Եթե երեք նախկին նախագահները Ձեր եւ Ձեր երեխայի հետ նման կերպ շփվեին, նման վերաբերմունք ցուցաբերեին, ինչ Նիկոլ Փաշինյանն արեց, Դուք կընդունեի՞ք նրանց ներողությունը, կներեի՞ք նրանց:

-Երեք նախկին նախագահները թքած ունեին, ընդհանուր առմամբ, մեր եւ մեր երեխաների օրվա վրա եւ ավելի վատ էին վարվում: Ավելին՝ նախկին նախագահները նույնիսկ ոչ հարիր բարեւի համար մարդ են սպանել: Սիրելիներս, եկեք մեր անցյալը չմոռանանք եւ իրերն իրենց անունով կոչենք:

-Այսինքն, եթե մարդու վրա բարկանան, մատ թափ տալով խոսեն, թքեն քաղաքացու վրա, դա կարող է ընկալելի լինել եւ ներվել ընդամենը մեկ բառով, մեկ ներողությամբ:

-Մեր կողմից ներողությունը տեսել եք, հակառակ կողմի ներողությանն ենք սպասում:

-Եւ վե՞րջ: Ամեն ինչ կարգավորվա՞ծ է:

-Ասում եմ՝ նախկինում մարդու ոչ հարիր բարեւի համար մարդ են սպանել:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ՉԻ ՀԱՐՈՒՑՎԻ

«Հրապարակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արմինե Օհանյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում չի հարուցվի: Լրատվամիջոցներին այս մասին հայտնել են ՀՀ գլխավոր դատախազությունից:

«Դատախազը 2026 թվականի մարտի 23-ին որոշում է կայացրել Ա.Օ.-ի նկատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում չհարուցելու մասին»,-նշել են դատախազությունից:

Հիշեցնենք՝ մարտի 17-ին Արմինե Օհանյանին ՔԿ էին հրավիրել վկայի կարգավիճակով:

Քրեական վարույթ էր նախաձեռնվել ՔՕ 330-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, ինչպես նաեւ այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը՝ հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործությունների, զանգվածային լրատվության միջոցների կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ):

ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼ ԵՆ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը եւ նրա ընտանիքի անդամները հարցաքննվել են որդու ինքնասպանության քրեական վարույթի շրջանակներում: Ողբերգական դեպքից անցել է 5 ամիս, եւ իրավապահները նշանակել են գործով մի քանի փորձաքննություններ ու սպասում են դրանց եզրակացությանը:

2025 թ. հոկտեմբերի 25-ին Արաբկիր համայնքում հնչել է հրազենային կրակոց: Հրազենային վնասվածքով հիվանդանոց տեղափոխվածի վնասվածքը կոկորդի մասում էր: Նրա վիճակը շատ ծանր էր, եւ Առաջին համալսարանական հիվանդանոցի բժիշկները պայքարում էին երիտասարդի կյանքի համար: Ավելի ուշ պարզվեց, որ հրազենային վիրավորում ստացածը ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանի որդին էր՝ Մխիթար Մարգարյանը, որի կյանքը փրկել չհաջողվեց: Դեպքի վայրում ոստիկանները հայտնաբերել էին ատրճանակ, արնանման հետքեր եւ կրակված մեկ պարկուճ: Դեպքի մասին տեղեկությունը ոստիկանության Արաբկիրի բաժնից փոխանցվել էր ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժին: Հրանտ Մարգարյանի որդու՝ Մխիթար Մարգարյանի մահվան դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ: «Ինքնասպանության հասցնելու փորձի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ»,- ասել է ՔԿ խոսնակ Կիմա Ավդալյանը:

ԿՀՐԱՊԱՐԱԿՎԻ

ՀԷՑ-ի լիցենզիայի դադարեցման դեմ ներկայացված հայցով դատական ակտը կհրապարակվի մարտի 26-ին: Այս մասին հայտնում է փաստաբան Վարդան Ալոյանը. «Սամվել Կարապետյանի հայտնի հարցազրույցից հետո Ն. Փ.-ի ֆեյսբուքյան հրապարակման հիման վրա ՔՊ-ն նախաձեռնեց օրենսդրական փոփոխություններ ՀԷՑ-ը «խլելու» համար: Բացառապես ՔՊ-ի ձայներով այդ փոփոխությունները ընդունվեցին: Մի քանի օր անց ՔՊ-ական ՏԿԵՆ նախարար Դ.Խ.-ի հաղորդման հիման վրա, «նախկին» ՔՊ-ական Մ.Մ.-ի միանձնյա ոչ իրավաչափ որոշմամբ ՀԷՑ-ի նկատմամբ հարուցվեց վարչական վարույթ եւ Ռ.Պ.-ն նշանակվեց ՀԷՑ-ի Ժ.Կ.: Ժ.Կ.-ն անմիջապես հեռացրեց ՀԷՑ-ի պրոֆեսիոնալ ղեկավար կադրերից շատերին եւ նրանց փոխարեն նշանակեց էներգետիկայի ոլորտի հետ կապ չունեցող հիմնականում ՔՊ-ական անձանց: ՀԾԿՀ-ի բացառապես ՔՊ-ի կողմից ընտրված անդամների ձայներով ՀԷՑ-ը 17/11/2025 թվականին զրկվեց էլեկտրաէներգիայի բաշխողի լիցենզիայից: Նշված ակնհայտ անհիմն եւ ոչ իրավաչափ վարչական ակտը սեփականատիրոջ կողմից բողոքարկվեց դատական կարգով: Օրենքով նման գործերի քննության համար սահմանված է երկամսյա ժամկետ: Շաբաթ օրվանից սկսված եւ ընդմիջումներով այսօր (երեկ՝ խմբ.) առավոտյան ժամը 04:00-ին ավարտված (փաստացի շուրջ 29 ժամ տեւած) դատաքննության ընթացքում ջախջախվեցին վարույթի հիմք հանդիսացած բոլոր սին փաստերն ու ենթադրությունները:

Եթե լրացուցիչ ապացույցներ հետազոտելու կամ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարզելու անհրաժեշտություն չառաջանա, ապա դատական ակտը կհրապարակվի 26/03/2026 թվականին:

ՀԷՑ-Ը ՉԻ ԾԱՌԱՅԵԼՈՒ ՔՊ-ԻՆ»:

ՁԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ

Իրանում ավելի քան 30 մարդ է ձերբակալվել Իսրայելի եւ Միացյալ Նահանգների հետ կապեր ունենալու կասկածանքով: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդում է «ՌԻԱ Նովոստի» գործակալությունը՝ վկայակոչելով Իրանի իշխանություններին եւ ՁԼՄ-ներին: Իրանի հետախուզության նախարարությունը հայտարարել է 24 մարդու ձերբակալության մասին Իրանի արեւմտյան Համադանի նահանգում գտնվող ռազմական օբյեկտների վերաբերյալ տվյալներ փոխանցելու համար, որոնցից մի քանիսը ռմբակոծության են ենթարկվել Միացյալ Նահանգների եւ Իսրայելի կողմից:

Չորս մարդ ձերբակալվել է երկրի արեւմուտքում գտնվող Լորեստանի նահանգում՝ «հակառակորդի» հետախուզության համար տեղեկատվություն հավաքելու համար:

Եւս երկուսը ձերբակալվել են Իրանի հարավարեւելյան Քերմանի նահանգում՝ զենք տեղափոխելու համար:

Բացի այդ, ISNA լրատվական գործակալությունը հաղորդել է հյուսիսային Սեմնանի նահանգում ԱՄՆ-ի եւ Իսրայելի հետ կապված երեք «գործակալի» ձերբակալության մասին

ԹՐԱՄՓԸ ՊՆԴՈՒՄ Է

Չնայած պաշտոնական Թեհրանի հերքմանը, թե Վաշինգտոնի հետ բանակցում է պատերազմը դադարեցնելու շուրջ՝ Դոնալդ Թրամփը երեկ կրկին հայտարարել է, թե Իրանի հետ բանակցում են եւ հիմա համաձայնության հասնելու լավ հնարավորություն կա: Այս մասին հայտնում է «Ազատություն»-ը:

ԱՄՆ նախագահը պնդել է, թե Իրանը համաձայնել է հրաժարվել միջուկային զենք ունենալու գաղափարից: Ըստ նրա՝ Թեհրանն այժմ ունի եւս մեկ հնարավորություն՝ վերջ դնելու ԱՄՆ-ին եւ նրա դաշնակիցներին ուղղված սպառնալիքներին: Սպիտակ տան ղեկավարը նաեւ հույս է հայտնել, որ Թեհրանը կօգտվի այդ հնարավորությունից:

«Մենք հիմա իսկապես լավ քննարկումներ ենք ունենում: Նրանք ուզում են խաղաղություն: Նրանք համաձայնել են, որ չեն ունենա միջուկային զենք եւ այլն: Բայց տեսնենք, թե ինչ կստացվի: Բայց ես կասեի, որ շատ մեծ հնարավորություն կա», -նշել է Թրամփը:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

42.7 ՄԼՆ ԵԿԱՄՈՒՏ, 30.5 ՄԼՆ ՎԱՐԿ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ArmLur.am-ը ուսումնասիրեց Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ Գեւորգ Մանուկյանի՝ 2024 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի տարեկան հայտարարագիրը եւ առանձնացրեց բոլոր առկա տվյալները: Նշենք, որ նա պաշտոնը ստանձնել է 2023 թվականի հոկտեմբերի 16-ին:

Հայտարարագրի համաձայն՝ Մանուկյանը ունի 1 միավոր անշարժ գույք՝ բնակարան Շիրակի մարզի Անի համայնքում, որը հանդիսանում է համատեղ սեփականություն (ձեռքբերված՝ 31/08/2005, այլ կարգավիճակով): Բացի այդ, նա փաստացի տիրապետում է (90 եւ ավելի օր) Երեւանում գտնվող անհատական բնակելի տան՝ իր տնտեսական շինություններով:

Armlur.am-ը պարզեց, որ պաշտոնյան իրականացրել է նաեւ խոշոր ֆինանսական գործարքներ: Մասնավորապես՝

- «ԷԼԻՏ ՌԵԶԻԴԵՆՍ» ՓԲԸ-ին տրամադրել է 30,500,000 դրամ փոխառություն, որը տարվա վերջում պահպանվել է նույն չափով՝ 30,500,000 դրամ,
- տրամադրել է եւս 5,000,000 դրամ փոխառություն, որը նույնպես ամբողջությամբ պահպանվել է տարվա վերջում՝ 5,000,000 դրամ:

Բանկային հաշիվների մնացորդները (բացառությամբ ավանդների) կազմել են 452,000 դրամ:

Կանխիկ դրամի մասով՝ տարվա սկզբում առկա է եղել 2,500,000 դրամ, իսկ տարվա վերջում այն նվազել է՝ կազմելով 500,000 դրամ:

Հաշվետու տարվա եկամուտները ներառում են՝

- ստացված վարկ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ից՝ 30,500,000 դրամ,
- ստացված վարկ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ-ից՝ 274,000 դրամ,
- աշխատավարձ Կադաստրի կոմիտեից՝ 10,799,735 դրամ,
- քաղաքացիաիրավական պայմանագրից եկամուտ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան»-ից՝ 24,000 դրամ,
- աշխատավարձ «Երեւանի պետական համալսարան»-ից՝ 990,028 դրամ,
- քաղաքացիաիրավական պայմանագրից եկամուտ «Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարան»-ից՝ 169,954 դրամ:

Ընդհանուր եկամուտը կազմել է 42,757,717 դրամ:

Միաժամանակ, ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 30,500,000 դրամ (հիփոթեքային վարկ, հիփոթեքի առարկա՝ բնակարան), իսկ ընդհանուր պարտավորությունները կազմել են 31,284,245 դրամ:

Միաժամանակ, ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 30,500,000 դրամ (հիփոթեքային վարկ, հիփոթեքի առարկա՝ բնակարան), իսկ ընդհանուր պարտավորությունները կազմել են 31,284,245 դրամ:

Armlur.am-ը նաեւ ուսումնասիրեց պաշտոնը ստանձնելու պահին՝ 2023 թվականի տվյալները, որտեղ նշված է՝

- բանկային հաշիվների մնացորդ՝ 400,000 դրամ,
- կանխիկ դրամ՝ 2,000,000 դրամ,
- հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներ՝ 7,210,564 դրամ,
- ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդ՝ 429,500 դրամ:

Գեւորգ Մանուկյանի հայտարարագիրը ցույց է տալիս, որ պաշտոնը ստանձնելուց հետո նրա ֆինանսական ակտիվությունը զգալիորեն աճել է: Մի կողմից՝ բազմապատկվել են եկամուտները, մյուս կողմից՝ ավելացել են վարկային պարտավորությունները եւ միաժամանակ արձանագրվել են խոշոր փոխառություններ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՏԱՐԲԵՐ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

«Ես ցավում եմ Հրայր Թովմասյանի եւ լիազորությունների վաղաժամկետ դադարի համար, եւ ամբողջ այս ոդիսականի համար. մեր նմանությունը հետեւյալում է՝ մենք երկուսս էլ Պետահիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի կարգավիճակից գնում ենք ՍԴ»: Այս մասին, խորհրդարանում պատասխանելով պատգամավոր Թագուհի Թովմասյանի հարցին, ասել է Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու Վլադիմիր Վարդանյանը:

«Եթե շատ ավելի անկեղծ՝ պարոն Թովմասյանը հրաժարական էր ներկայացրել նաեւ հանձնաժողովի նախագահի պաշտոնից, երբ առաջադրվել էր ՍԴ դատավորի պաշտոնում, բայց կա մի էական տարբերություն: Նախ՝ ՍԴ դատավորներից առնվազն հինգը Սահմանադրական դատարան են գնացել անմիջապես խորհրդարանից, եւ երբեք դա հարց չի առաջացրել՝ Կիմ Բալայան, Արեւիկ Պետրոսյան, Ռաֆայել Պապայան. թիվը մեծ է եղել»,- հայտնել է Վարդանյանը:

Ինչ վերաբերում է Հրայր Թովմասյանին, ասել է. «Խնդիրը ոչ նրա մեջ էր, որ նա խորհրդարանից տեղափոխվեց ՍԴ, որքան նրա մեջ, որ լինելով սահմանադրության նոր տեքստի ջատագով, խոսելով նրա մասին, որ սահմանադրական նոր կարգավորումներն ավելի ժողովրդավարական են, ըստ էության, լինելով Սահմանադրության Այո-ի շտաբի կարեւորագույն դերակատարներից մեկը, այդուհանդերձ, նոր Սահմանադրության, իր իսկ կողմից կերտված Սահմանադրությունը թողնում է մի կողմ եւ ընտրվում է այն սահմանադրական կարգավորումների համաձայն, որոնք օրեր անց պետք է դադարեն գոյություն ունենալ»:

«Օրեր անց: Սա, իմ կարծիքով, նույն իրավիճակի մասին չի վկայում, մենք տարբեր իրավիճակներում ենք: Հավատացնում եմ ձեզ»,- ասել է նա: Վարդանյանը հորդորել է չխառնել կուսակցական կարգապահության պահպանումը, որը շատ կարեւոր է խորհրդարանական ուժերի ձեւավորման համար, անկախության եւ անաչառության հետ:

Հիշեցնենք՝ ՀՀ Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության նախագահը Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնում ընտրելու համար առաջարկել է Վլադիմիր Վարդանյանի թեկնածությունը:

ԿԱՌԱՎԱՐՎՈՒՄ Է ԱԴՐԲԵՋԱՆԻՑ

«Լուսավոր Հայաստան» կուսակցության նախագահ, ՀՀ հատուկ հանձնարարություններով նախկին դեսպան Էդմոն Մարուքյանը տելեգրամյան գրառում է կատարել, որը մեջբերել է «Առավոտ»-ը. «Արդեն երկար ժամանակ է՝ Հայաստանում քաղաքականությունը փոխվել է, եւ այլեւս չի օգտագործվում «բռնի տեղահանված» ձեւակերպումը: Արցախցիները ստացել են փախստականի կարգավիճակ եւ, հետեւաբար, ունեն դրանից բխող իրավունքներ, այդ թվում՝ նաեւ վերադարձի իրավունք: Վարչապետը, ով գոռգոռում էր արցախցու վրա, դա անում էր նաեւ այն պատճառով, որ Ադրբեջանը միջազգային հանրության հետ համապատասխան աշխատանք է տարել, եւ այդ մոտեցումը նաեւ պարտադրվել է մեր իշխանություններին. այլեւս չպետք է օգտագործվի «էթնիկ զտում» ձեւակերպումը, չպետք է ասվի, որ արցախցիները բռնի տեղահանվել են: Փոխարենը առաջ է մղվում այն թեզը, թե նրանք իրենց կամքով են դուրս եկել կամ պարզապես փախել են: Ալիեւն էլ հայտարարում է, որ նրանք իրենց կամքով են հեռացել՝ իբր ինքը ի՞նչ կարող էր անել:

Այս կառավարությունը կառավարվում է Ադրբեջանից, եւ հենց դրանով է պայմանավորված պետական քաղաքականության փոփոխությունը:

Բոլորը կենտրոնացել են վարչապետի պահվածքի՝ նրա էմոցիաների, ժեստերի, երեխայի ներկայությամբ մորը վիրավորելու վրա, սակայն դրա սոցիալ-հոգեբանական հիմքերը կապված են Ադրբեջանից եկող հրահանգների հետ: Այն հանգամանքի, որ այլեւս չի թույլատրվում արցախցիների վերաբերյալ օգտագործել «էթնիկ զտված» կամ «բռնի տեղահանված» ձեւակերպումները»:

ԱՆՏԱՐԲԵՐ ՉԷ

ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԸ ԽՈՒԶԱՐԿԵԼ ԵՆ ՏՈՒՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ իրավապահները կալանավորված երիտասարդի տանից տարել են հեռախոս, համակարգիչ, սակայն որեւէ իր չեն հայտնաբերել ահաբեկչության իրական վարույթին առնչվող:

ArmLur.am-ը արդեն տեղեկացրել էր, որ այս տարվա մարտի 6-ին Երեւան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի բնակիչ, 1994 թվականին ծնված Ռաֆֆի Մանդալյանը հրավառ շշեր էր նետել ՀՀ Ազգային անվտանգության ծառայության վարչական շենքի վրա:

ArmLur.am-ի՝ իրավապահ մարմիններին մոտ կանգնած աղբյուրները միջադեպի վերաբերյալ նոր, բացառիկ մանրամասներ են հայտնում՝ բացահայտելով երիտասարդի գործողության շարժառիթները:

Մասնավորապես, ըստ ArmLur.am-ի տեղեկությունների՝ դյուրավառ շիշը նետած քաղաքացի Ռաֆֆի Մանդալյանը իրավապահներին ցուցմունք է տվել, բացատրել, որ իր քայլը պայմանավորված է եղել խորը զայրույթով եւ հիասթափությամբ: Նա նշել է, որ իրեն մտահոգում է հայրենիքի անվտանգության վիճակը, եւ, իր համոզմամբ, հասարակության մեջ առկա է անտարբերություն եւ լռություն այդ հարցի շուրջ:

Մանդալյանի խոսքով՝ իր գործողությամբ փորձել է ցույց տալ, որ «բոլորը անտարբեր չեն»: Նրա նպատակն է եղել կոտրել, իր ձեւակերպմամբ, հասարակական լռությունը եւ ուշադրություն հրավիրել այն հարցի վրա, որ քաղաքացիների մի հատվածը մտահոգված է երկրի ապագայով:

Ըստ նույն աղբյուրների՝ նա կանխամտածված կերպով գնացել է Ազգային անվտանգության ծառայության շենք ոչ աշխատանքային ժամին՝ փորձելով խուսափել մարդկային վնասներից եւ միաժամանակ ապահովել իր ուղերձի հրապարակայնությունը:

Իր բացատրությամբ՝ այդ քայլը կատարել է՝ «ինքնազոհության գնալով», միայն թե իր ասելիքը հասնի հանրությանը. բոլորը չէ, որ անտարբեր են հայրենիքի ճակատագրի նկատմամբ: Հատկանշական է նաեւ, որ շշերը նետելուց հետո Ռաֆֆի Մանդալյանը չի փորձել փախչել դեպքի վայրից: Նա կանգնել է փողոցում եւ սպասել իրավապահներին:

Դատարանում եւս նա բարձրաձայնել է իր մտահոգությունները՝ հարց ուղղելով ներկաներին. «Հայրենիքը վտանգի տակ է, մի՞թե դուք չեք անհանգստանում»:

Նշենք նաեւ, որ կալանավորված Ռաֆֆի Մանդալյանը ներկայումս գտնվում է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում: Վերջինս մասնագիտությամբ ատաղձագործ է:

ՀՀ քննչական կոմիտեից պաշտոնապես հայտնել էին, որ քրեական վարույթի նախաքննության ընթացքում 1 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով՝ ահաբեկչություն, որը պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով»:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՏՆՕՐԵՆԸ ՄԵՂԱԴՐՎՈՒՄ Է

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում նախաձեռնված քրեական վարույթով հիմնավորվել է, որ «Սեւանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենը, օգտագործելով իր ծառայողական լիազորությունները, կատարել է իրեն վստահված խոշոր չափերի գույքի հափշտակություն, ինչպես նաեւ խմբի կազմում փաստաթուղթ է կեղծել:

Մասնավորապես պարզվել է, որ վերը նշված բժշկական կենտրոնի տնօրենը 2022 թվականին աշխատանքի է ընդունել իր մտերիմ անձին, ով, սակայն, նշված ժամանակահատվածից մինչեւ 2024 թվականի նոյեմբերն ընդհանրապես աշխատանքի չի հաճախել եւ իր աշխատանքային պարտականությունները չի կատարել:

Նախաքննությամբ հիմնավորվել է նաեւ, որ տնօրենը, նույն բժշկական կենտրոնի աշխատակցի հետ նախնական համաձայնությամբ, վերը նշված անձի՝ աշխատանքի հաճախելու վերաբերյալ կազմել է կեղծ փաստաթուղթ, որի հետեւանքով ԲԿ-ի բյուջեից որպես աշխատավարձ ավել է վճարվել 2.238.745 ՀՀ դրամ գումար:

ԲԿ-ի տնօրենին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով եւ 457-րդ հոդվածի 2-րդ մասով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել բացակայելու արգելքն ու պաշտոնավարման կասեցումը: Տնօրենի մտերիմ անձին եւ ԲԿ-ի աշխատակցին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 46-256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով:

Նախաքննության ընթացքում պետությանը պատճառված 2.238.745 ՀՀ դրամ վնասն ամբողջությամբ վերականգնվել է:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

ՋԵՆՔՈՎ ՍՊԱՌՆԱՑԵԼ Է

Ոստիկանության գվարդիայի ծառայողները ձերբակալել են գազային ատրճանակով սպառնացող անձին: Մարտի 24-ին՝ ժամը 11:25-ին, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում Երեւանի քաղաքապետարանի կողմից իրականացվող ապօրինի կառույցների ապամոնտաժման ընթացքում քաղաքացիներից մեկը գազային ատրճանակով սպառնացել է աշխատանքներ կատարող անձանց: Տեղում հասարակական կարգի պահպանություն իրականացնող ոստիկանության գվարդիայի ծառայողները ձերբակալել են նշված անձին ու տեղափոխել Համայնքային ոստիկանության Մալաթիայի բաժին:

ԼՈՒՐԵՐ

ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ

Այսօր կկայանա Արշակ Սրբազանի գործով դատական առաջին նիստը: Այս մասին հայտնում է փաստաբան Արսեն Բաբայանը. «Մարտի 25-ին՝ ժամը 16:00-ին, նշանակված է Արշակ արքեպիսկոպոս Խաչատրյանի նկատմամբ իրականացվող քաղաքական հետապնդման գործով առաջին դատական նիստը, որը պետք է կայանա Արմավիր քաղաքի Հանրապետության 41 հասցեի դատական նիստերի թիվ 2 դահլիճում:

Հիշեցնեմ, որ այս գործով Սրբազանին մեղադրանք է ներկայացվել այն բանի համար, թե իբր նա 2018 թվականին «Նոր Հայաստան, նոր հայրապետ» շարժման անդամներին վարկաբեկելու նպատակով անհայտ անձին հանձնարարել է ակցիայի մասնակիցների ուսապայուսակի մեջ մարիխուանա գցել: Թե իբր այդպիսով Սրբազանը կատարել է իրացման նպատակով թմրամիջոցի շրջանառություն: Այս գործով Սրբազանին 3 ամիս պահել են բանտարկության մեջ:

Այս քրեա-քաղաքական գործն իր ամբողջ ծավալով հավակնում է դառնալ իրավաբանության մեջ աննախադեպ ծաղրերգություն:

Սա մի գործ է, որի համաձայն՝ իբր շրջանառվել է թմրամիջոց, սակայն այդ թմրամիջոց իրեղեն ապացույցն անհետացել է քննչական մարմնից:

Սա մի գործ է, որի «ապացույցները» սկսվում են՝ չեմ կարող պնդել, բայց կարծում եմ ինքն է... նախադասությամբ:

Հ.Գ. Շատ «պատահականորեն» հենց այս գործով սպասվող դատական նիստի նախորդ օրը (այսօր (երեկ՝ խմբ.) եւ հենց հիմա) տեսչական մարմինը ստուգումներ է սկսել Արշակ Սրբազանի քրոջ ամուսնուն պատկանող դեղատանը»:

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԾՆՆԴԿԱՆ Է ՄԱՀԱՑԵԼ

Երեւանում երեկ ծննդկան է մահացել: Այդ մասին ՁԼՄ-ներին հայտնում են ՀՀ առողջապահության նախարարությունից: Ծննդաբերության ընթացքում դիտվել է հղիի վիճակի կտրուկ վատթարացում՝ գիտակցության կորուստ: Բժշկական թիմի կողմից արվել են հնարավոր միջոցառումները, կատարվել է շտապ կեսարյան հատում: Բժշկական թիմի եւ ատողջապահության նախարարության ջանքերով անմիջապես կազմակերպվել է ծննդկանին 3-րդ մակարդակի վերակենդանացման բաժանմունք տեղափոխելը: Ցավոք, ծննդկանի կյանքը փրկել չի հաջողվել:

Նշանակված է դատաբժշկական փորձաքննություն: Փոքրիկի առողջական վիճակը կայուն ծանր է:

Ծննդկանը մահացել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնում. նա 40 տարեկան էր:

● *ՀՀ-ում մարտի 23-ից 24-բացահայտվել է 150 հանցագործություն, որոնցից 9-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼ ԵՆ

ՀՀ տարածքում, «Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» (ՀՀՌՑ) ՓԲԸ համակարգում հեռուստատեսային աշտարակների 61 օպերատորներ, որոնցից 13-ը՝ Տավուշի մարզում, աշխատանքից ազատվել են: «Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ գլխավոր տնօրեն Նարեկ Ադամյանը լրագրողիս տեղեկատվական հարցմա նը պատասխանել է, որ օպերատորներն աշխատանքից ազատվել են սեփական դիմումների հիման վրա, ինչը ճշմարտության նման չէ: Նա հայտնել էր, որ 2026թ. ՀՀՌՑ-ի կողմից հեռարձակման ցանցի արդիականացման գործընթացի շրջանակում իրականացվել են կադրային փոփոխություններ՝ պայմանավորված ինչպես թվային եւ ավտոմատացված կառավարման համակարգերի, այնպես էլ հեռարձակման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ, որ իրականացված փոփոխությունները որեւէ կերպ չեն ազդել եւ չեն ազդելու հեռուստատեսային եւ ռադիոհաղորդումների հեռարձակման որակի վրա: Սակայն դա այդպես չէ: Իջեւան համայնքի Սեւքար գյուղի բնակիչները հայտնեցին, որ վերջին շրջանում հեռուստաաշտարակից հեռարձակվող հաղորդումները հաճախ ընդհատվում են, նաեւ հաղորդումների որակի անկում է լինում:

«ԱՆՀԵՏԱՑԵԼ ԵՆ»

Պետական իշխանության մարմինները եւ համայնքապետարանները պետք է գործեն թափանցիկ, հաշվետվողական, որպեսզի քաղաքացիները իրազեկ լինեն իրենց կյանքին վերաբերող որոշումներին: Այդ թափանցիկության, հաշվետվողականության, քաղաքացիների հետ իշխանության հետադարձի կապի ապահովման գործիքներ են պետական իշխանության մարմինների եւ համայնքապետարանների ինտերնետային կայքերը, որոնց ստեղծման, պահպանման, շահագործման համար աշխատողներ են ներգրավված, ֆինանսական միջոցներ են ծախսվում: Խնդիրը դիտարկեմ կոնկրետ օրինակով: Վերջին օրերին լրիվ դատարկվել է Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքի համայնքապետարանի աշխատակազմի էջը: Նախկինում այդ էջում ներկայացված էին համայնքապետարանի աշխատակիցները՝ համայնքի ղեկավարից մինչեւ համայնքապետարանի հավաքարարներ, նրանց կոնտակտային տվյալները, լուսանկարները եւ այլն: Ի՞նչն է պատճառը, որ համայնքապետարանի աշխատակազմի անդամների վերաբերյալ տվյալներն անհասանելի են դարձել: Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության եւ հողաշինության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Արսեն Սարգսյանի դեմ կոռուպցիոն բնույթի քրեական վարույթ է հարուցվել, նա կալանավորվել է, գտնվում է «Նուբարաշեն» քկի-ում: Կարող եմ ենթադրել, որ Ա. Սարգսյանի վերաբերյալ տվյալները, նրա լուսանկարը Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքից տեխնիկապես չեն կարողացել «պոկել» հեռացնել, ուստի համայնքապետարանի ողջ աշխատակազմի տվյալներն են հեռացրել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Պակիստանի եւ Աֆղանստանի միջեւ հակամարտությունը ներկայումս գտնվում է սման բարձր փուլում եւ արդեն բնութագրվում է որպես «բաց ռազմական դիմակայություն»: 2026 թվականի փետրվար-մարտ ամիսներին տեղի ունեցած իրադարձությունները՝ փոխադարձ օդային հարվածներ, սահմանային բախումներ եւ քաղաքացիական կորուստներ, վկայում են, որ հարաբերությունները դուրս են եկել միայն սահմանային միջադեպերի շրջանակից: Սակայն այս իրավիճակը պետք է դիտարկել ոչ թե առանձին, այլ որպես երկարատեւ հակասությունների շարունակություն, որոնք ձեւավորվել են ազգայնական, քաղաքական, էթնիկ եւ անվտանգային գործոնների ազդեցությամբ:

Պատմական հիմքեր եւ հակամարտության սկզբնավորումը

Հակամարտության հիմքում ընկած է 1893 թվականին սահմանված Դյուրանդի գիծը, որը բաժանել է փաշթուն էթնիկ խմբին երկու մասի: Այս սահմանը ձեւավորվել է բրիտանական գաղութային քաղաքականության արդյունքում եւ հետագայում դարձել է Աֆղանստանի եւ Պակիստանի միջեւ հիմնական վիճելի հարցը: Աֆղանստանը, ի տարբերություն Պակիստանի, երբեք լիարժեք չի ճանաչել այդ սահմանը որպես միջազգային սահման: 1947 թվականին Պակիստանի ստեղծումից հետո Աֆղանստանը ոչ միայն հրաժարվեց ճանաչել այդ սահմանը, այլ նաեւ հանդես եկավ «Փաշտունիստան» գաղափարով՝ առաջարկելով ստեղծել անկախ պետություն Պակիստանի հյուսիսարեւմտյան տարածքներում բնակվող փաշթունների համար: Այս մոտեցումը Պակիստանի կողմից ընկալվեց որպես տարածքային ամբողջականության դեմ ուղղված քաղաքականություն: Արդյունքում, արդեն 1950-ականներից սկսվեցին սահմանային լարվածություններ, ներառյալ զինված ներխուժումներ, անուղղակի ռազմական գործողություններ եւ դիվանագիտական ճգնաժամեր: 1961 թվականին երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունները նույնիսկ խզվեցին:

1970-ականներին հակամարտությունը նոր փուլ մտավ, երբ Աֆղանստանը սկսեց աջակցել Պակիստանի ներսում գործող էթնիկ եւ ազգայնական շարժումներին (մասնավորապես՝փաշթուն եւ բելուջ խմբերին): Ի պատասխան՝ Պակիստանը որդեգրեց «հակազդման քաղաքականություն» եւ սկսեց աջակցել Աֆղանստանի ներսում գործող իսլամիստական ուժերին: Այս ռազմավարությունը դարձավ Պակիստանի երկարաժամկետ քաղաքականության հիմք եւ հետագայում հանգեցրեց զինված իսլամիստական խմբավորումների ձեւավորմանը եւ ամրապնդմանը:

Սառը պատերազմի ազդեցությունը եւ զինված խմբերի ձեւավորումը

Խորհրդա-աֆղանական պատերազմի ընթացքում (1979-1989) Պակիստանը դարձավ հակախորհրդային ուժերի հիմնական աջակցողներից մեկը՝ համագործակցելով ԱՄՆ-ի եւ այլ արեւմտյան երկրների հետ: Այս ընթացքում ձեւավորվեց լայնածավալ զինված ցանց, որը ներառում էր տարբեր իսլամիստական խմբավորումներ, այդ թվում՝ հետագայում իշխանության եկած Թալիբանը: Այս գործընթացը կարեւոր է՝ հասկանալու համար ներկայիս հակամարտությունը, քանի որ հենց այդ ժամանակաշրջանում ձեւավորվեցին այն կապերը, գաղափարախոսությունը եւ ռազմական ենթակառուցվածքները, որոնք այսօր շարունակում են ազդել տարածաշրջանի վրա: Պակիստանի անվտանգության համակարգի եւ որոշ զինված խմբերի միջեւ ձեւավորված կապերը հետագայում դարձան երկակի քաղաքականության հիմք՝ մի կողմից պայքար ահաբեկչության դեմ, մյուս կողմից՝որոշ խմբերի հանդեպ հանդուրժողականություն կամ աջակցություն:

Թալիբանի վերելքը

1990-ականներին Պակիստանը ակտիվորեն աջակցում էր Թալիբանին Աֆղանստանում իշխանության գալու գործընթացում՝ դիտարկելով այն որպես ռազմավարական գործընկեր: Սակայն 2001 թվականից հետո, ԱՄՆ-ի միջամտությունից հետո, հարաբերությունները փոխվեցին եւ դարձան ավելի բարդ: 2021 թվականին Թալիբանի վերադարձը իշխանության նոր իրավիճակ ստեղծեց: Թեեւ սկզբնական շրջանում ակնկալվում էր, որ Պակիստանը կկարողանա ազդել Թալիբանի վրա, իրականում Աֆղանստանի նոր իշխանությունները սկսեցին վարել ավելի ինքնուրույն քաղաքականություն: Սա հանգեցրեց հարաբերությունների աստիճանական վատթարացման:

TTP գործոնը՝ որպես հակամարտության հիմնական պատճառ

Ներկայիս հակամարտության առանցքային պատճառը կապված է «Tehrik-e-Taliban Pakistan» (TTP) խմբավորման գործունեության հետ: Այս կազմակերպությունը ձեւավորվել է 2007 թվականին եւ նպատակ ունի պայքարել Պակիստանի պետության դեմ, հաստատել շարիաթական կարգեր եւ թուլացնել պետական կառույցները: Պակիստանը պնդում է, որ TTP-ն գործում է Աֆղանստանի տարածքից եւ ունի սերտ կապեր Աֆղանստանի Թալիբանի հետ: Այս պնդումները հիմնվում են այն փաստի վրա, որ TTP-ն պատմականորեն կապված է աֆղանական Թալիբանի հետ եւ հաճախ օգտագործում է Աֆղանստանի տարածքը որպես անվտանգ ապաստան: Աֆղանստանը պաշտոնապես հերքում է այդ մեղադրանքները, սակայն միաժամանակ չի իրականացնում բավարար քայլեր TTP-ի գործունեությունը սահմանափակելու ուղղությամբ: 2020 թվականից հետո TTP-ն ակտիվացրել է իր գործունեությունը՝ իրականացնելով բազմաթիվ հարձակումներ Պակիստանի անվտանգության ուժերի դեմ: Սա դարձել է Պակիստանի համար առաջնային անվտանգային սպառնալիք:

Վերջին էսկալացիայի զարգացումը (2025-2026)

2025 թվականի հոկտեմբերին, արտաքին միջնորդների՝ Քաթարի, Թուրքիայի եւ Սաուդյան Արաբիայի աջակցությամբ, կողմերը համաձայնեցին ժամանակավոր հրադադարի: Սակայն բանակցությունները ձախողվեցին, եւ տարվա վերջում լարվածությունը կրկին աճեց: 2026 թվականի փետրվարին իրավիճակը կտրուկ սրվեց:Փետրվարի 16-ին տեղի ունեցած հարձակման արդյունքում զոհվեցին Պակիստանի անվտանգության աշխատակիցներ, ինչից հետո Պակիստանը իրականացրեց օդային հարվածներ Աֆղանստանի տարածքում: Աֆղանստանը պատասխանեց ռազմական գործողություններով՝ հարվածելով Պակիստանի սահմանային դիրքերին: Մարտի կեսերին Պակիստանը առաջին անգամ հարվածներ հասցրեց ոչ միայն սահմանային շրջաններին, այլ նաեւ Աֆղանստանի մայրաքաղաքին՝Քաբուլին: Այս քայլը նշանակալի է, քանի որ այն ցույց է տալիս հակամարտության տարածման նոր մակարդակ: Մի քանի օր անց հայտարարվեց ժամանակավոր դադար, սակայն ընդհանուր իրավիճակը շարունակում է մնալ անկայուն:

Հակամարտության աշխարհաքաղաքական նշանակությունը

Հակամարտությունը ունի լայն տարածաշրջանային եւ միջազգային ազդեցություն: Պակիստանը միջուկային պետություն է եւ ունի սերտ կապեր Չինաստանի հետ, որը նրա հիմնական տնտեսական գործընկերն է: Երկու երկրները ներգրավված են «-Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում, մասնավորապես Չինաստան-Պակիստան տնտեսական միջանցքի նախագծում, որի արժեքը գնահատվում է մոտ 65 միլիարդ դոլար:

Տարածաշրջանում կարեւոր դեր ունեն նաեւ Ռուսաստանը եւ Հնդկաստանը: Հնդկաստանը, լինելով Պակիստանի հիմնական մրցակիցը, վերջին տարիներին ակտիվացրել է կապերը Աֆղանստանի հետ: Պակիստանը պնդում է, որ Հնդկաստանը կարող է աջակցել հակապակիստանյան խմբերին, այդ թվում՝TTP-ին, թեեւ այս պնդումները միջազգային մակարդակում ամբողջությամբ հաստատված չեն: Բացի այդ, հակամարտությունը կարող է նպաստել այլ ահաբեկչական խմբերի ակտիվացմանը, ներառյալ «Իսլամական պետություն» եւ «Ալ-Քաիդա» կազմակերպությունները, որոնք շահագրգռված են տարածաշրջանային անկայունության խորացմամբ:

Հումանիտար եւ տնտեսական հետեւանքներ

Հակամարտությունը ունի նաեւ լուրջ հումանիտար հետեւանքներ: ՄԱԿ-ի տվյալներով՝ 2026 թվականի փետրվարի վերջից մինչեւ մարտի կեսերը գրանցվել են տասնյակ զոհեր եւ հարյուրավոր վիրավորներ: Միաժամանակ, Պակիստանը վերջին տարիներին իրականացրել է աֆղան փախստականների զանգվածային արտաքսում: Միայն 2025 թվականին արտաքսվել է ավելի քան մեկ միլիոն մարդ: Սահմանների փակումը եւ առեւտրի սահմանափակումները ծանր հարված են հասցրել Աֆղանստանի տնտեսությանը, որը մեծապես կախված է արտաքին առեւտրից եւ տարանցիկ ուղիներից: Միեւնույն ժամանակ, այս քայլերը նաեւ բացասաբար են ազդում Պակիստանի սահմանամերձ շրջանների տնտեսության վրա:

Հնարավոր զարգացումներ

Ամենահավանական սցենարը հակամարտության շարունակությունն է ցածր կամ միջին ինտենսիվությամբ՝ պարբերական էսկալացիաներով: Լայնամասշտաբ պատերազմը քիչ հավանական է, սակայն դրա ռիսկը մնում է՝հատկապես հաշվի առնելով տարածաշրջանի անկայունությունը եւ արտաքին դերակատարների ներգրավվածությունը: Միաժամանակ, հնարավոր է նաեւ դիվանագիտական գործընթացների ակտիվացում՝ միջազգային միջնորդների մասնակցությամբ, սակայն դրանց հաջողությունը կախված է կողմերի քաղաքական կամքից եւ փոխզիջումների պատրաստակամությունից:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

● *Մարտի 23-ից 24-ը հանրապետությունում բացահայտվել է թմրանյութի հայտնաբերման 17 դեպք:*

ՖԱՍԹ ԲԱՆԿ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԵՆ ՍՏՈՐԱԳՐԵԼ

Ֆասթ Բանկն ու «Շիրակ» ֆուտբոլային ակումբն օրերս ստորագրել են գործընկերության պայմանագիր, որով Բանկը վերսկսում է իր աջակցությունն ակումբին եւ մարզում սպորտի զարգացմանը:

Ֆասթ Բանկի զարգացման տնօրեն Արմինե Տեր-Հովսեփյանն ասել է. «Երբ խոսում ենք Գյումրիի մասին, անհնար է չհիշել սպորտը, մասնավորապես «Շիրակ» ակումբը: «Շիրակ» ակումբը շատ մեծ քանակի երկրպագուներ ունի, եւ Ֆասթ Բանկն իր երկու մասնաճյուղերով անմասն չի մնում դրանից: Շատ ուրախ ենք, որ նորից վերսկսել ենք մեր համագործակցությունը «Շիրակ» ակումբի հետ: Լիահույս ենք, որ այդ համագործակցությունն ակումբին կբերի նոր հաղթանակներ եւ մեծ ոգեւորություն իր երկրպագուներին»:

Հավելենք, որ «Շիրակ»-ը հայկական ամենահին տիտղոսակիր ակումբներից է, որը մշտապես իր շուրջն է համախմբում տեղի մարզասերներին: Ակումբում վստահ են՝գործակցությունը նոր խթան է ինչպես թիմի, այնպես էլ Գյումրիում ֆուտբոլի զարգացման համար:

«Երբ մեր գործընկերն էր Ֆասթ Բանկը, մենք նվաճել ենք Հայաստանի Սուպեր գավաթը 2 տարի առաջ: Այս պահին «Շիրակ» ակումբը բռնել է քաղաքականություն՝ ավելի շատ ուշադրություն է դարձնում տեղի կադրերին՝ Գյումրիի երեխաներին, սաներին՝ տեղ տալով մեր երեխաներին ավելի առաջ գնալու: Մենք վստահ ենք, որ այս համագործակցությունն էլ ավելի կնպաստի ֆուտբոլի, առհասարակ սպորտի զարգացմանը Շիրակի մարզում, մասնավորապես Գյումրի քաղաքում»,-ասել է Շիրակ ՖԱ գործադիր տնօրեն Ռուբեն Հակոբյանը:

Ֆասթ Բանկն ուշադրության կենտրոնում է պահում Հայաստանում ամենատարբեր մարզաձեւերի զարգացման հիմնախնդիրները: Այս տարի Ֆասթ Բանկն արդեն գործակցության պայմանագրեր է կնքել «Վան» ֆուտբոլային ակումբի, «Փյունիկ» ակումբի կանանց, երիտասարդական թիմերի եւ «Երեւան» ֆուտզալի ակումբի հետ:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (Գ)

Հայտարարություն

Կորել է HYUNDAI R 170 W-9 էքսկավատորի պետհամարանիշը՝3649 LL:

Դեպքը տեղի է ունեցել Երեւան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում:

Տեղեկություն ունեցողներին խնդրում ենք զանգահարել՝097-28-28-30

Օհանյան Միեր Վլադիմիրի

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ

Գ

ԸՍՏ GLOBAL FINANCE-Ի՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՆԿ

Global Finance ամսագրի «Աշխարհի լավագույն բանկեր» 33-րդ ամենամյա մրցանակաբաշխության շրջանակում Ամերիաբանկը ճանաչվել է Հայաստանի լավագույն բանկ: Հաղթող 23 բանկերն ընտրվել են շուրջ 150 երկրից ու տարածքից՝ հիմնվելով այնպիսի չափանիշների վրա, ինչպիսիք են ակտիվների աճը, եկամտաբերությունը, աշխարհագրական ծածկույթը, ռազմավարական գործընկերությունները, բիզնեսի զարգացումն ու նորարարությունը: Գնահատման ընթացքում հաշվի են առնել նաեւ ֆինանսական շուկաների ու վարկանիշային գործակալությունների վերլուծաբանների, բանկային խորհրդատուների եւ ֆինանսական ոլորտում ներգրավված այլ մասնագետների կարծիքները:

Global Finance-ը շեշտում է, որ 2026թ.-ի մրցանակակիր բանկերը բարդ շուկայական պայմաններում կարողացել են արձագանքել իրենց հաճախորդների կարիքներին եւ արձանագրել տպավորիչ արդյունքներ՝ միաժամանակ հիմք ստեղծելով ապագա հաջողությունների համար: Ամսագրի գնահատմամբ, հաղթող կազմակերպությունները սակագների եւ համաշխարհային առեւտրի շուրջ շարունակվող անորոշության պայմաններում հմուտ կերպով կառավարել են իրենց ակտիվներն ու պարտավորությունները:

«Աշխարհաքաղաքական անկայունության, աճող ֆինթեք մրցակցության պայմաններում բանկային համակարգը շարունակում է ցուցաբերել դիմադրողականություն»,-նշել է Global Finance ամսագրի հրատարակիչ եւ գլխավոր խմբագիր Ջոզեֆ Դ. Ջիարապուտոն: «2026 թվականի «Աշխարհի լավագույն բանկեր» մրցանակաբաշխությունը պարգեւատրում է այն հաստատություններին, որոնք լավագույնս կառավարում են իրենց ակտիվներն ու պարտավորությունները՝ միաժամանակ ներդրումներ կատարելով թվային նորարարության եւ արհեստական բանականության մեջ՝ իրենց հաճախորդների փոփոխվող կարիքները բավարարելու համար»:

«Հայաստանի լավագույն բանկ» մրցանակին Ամերիաբանկն արժանանում է 11-րդ անգամ:

«Շնորհակալություն եմ հայտնում Global Finance-ին այս հեղինակավոր մրցանակի համար: Այս ձեռքբերումը փոփոխվող միջավայրում մարդակենտրոնությունը պահպանելու, ինչպես նաեւ թվային հարթակները զարգացնելու ու տեխնոլոգիական նորարարություններին համընթաց քայլելու մեր հանձնառության ճանաչումն է: Եւս մեկ անգամ Հայաստանի լավագույն բանկ ճանաչվելը մեզ համար շատ պատվաբեր եւ, միեւնույն ժամանակ, պարտավորեցնող է: Ամերիաբանկը շարունակում է հավատարիմ մնալ հաճախորդներին միջազգային որակի ֆինանսական ծառայություններ եւ գործարար լուծումներ տրամադրելու իր առաքելությանը», -նշել է Ամերիաբանկի գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանը:

Հավելենք, որ Ամերիաբանկը որպես Lion Finance Group (LFG) միջազգային ֆինանսական խմբի մաս, 2026թ. մարտի 20-ին արդեն պաշտոնապես միացել է աշխարհի առաջատար բորսաներից մեկի Լոնդոնի ֆոնդային բորսայի (London Stock Exchange) FTSE 100 ինդեքսին: 2026թ մարտի 23-ին այս փոփոխությունը մտել է ուժի մեջ:

Ամերիաբանկի մասին

Ամերիաբանկը ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը: Թվային փոխակերպման ռազմավարության ներքո բանկը ներդնում եւ շարունակաբար կատարելագործում է շուկայում եզակի պրոդուկտներ, ծառայություններ եւ նորարարական հարթակներ, որոնք միտված են բավարարելու մարդկանց ֆինանսական եւ ոչ ֆինանսական կարիքները: Ամերիաբանկը, որպես դինամիկ զարգացող ֆինթեք միջավայր, առաջարկում է կյանքի որակը բարելավող ամբողջական լուծումներ:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

1% ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ

Գ

Հուսալի որակ, բարձր արդյունավետություն եւ մասնագիտացված սարքավորումների լայն ընտրություն. արդեն 15 տարի Sino Armenia-ն Հայաստանում ներկայացնում է չինական արտադրության լավագույն շինտեխնիկան:

Ընկերությունը Հայաստանում ներկայացնում է աշխարհահռչակ HOWO բրենդի ինքնաթափ-բեռնատարները, որոնք համապատասխանեցված են երկրի կլիմայական պայմաններին ու վառելիքին:

Sino Armenia-ն Հայաստանում ներկայացնում է նաեւ համաշխարհային ճանաչում ունեցող այլ բրենդների շինարարական տեխնիկան եւ սարքավորումները, ինչպիսիք են SDLG-ն, HANGCHA-ն եւ ZOOMLION-ը:

Բացի շինարարական տեխնիկայի վաճառքից, Sino Armenia-ն ապահովում է նաեւ տեխնիկայի 24/7 ռեժիմով պրոֆեսիոնալ սպասարկում՝ մասնագիտացված շարժական թիմերի միջոցով:

Ոլորտում հաջողելու համար կարեւոր է նաեւ հուսալի ֆինանսական գործընկեր ունենալը: Ավելի քան տասը տարի Sino Armenia-ի կողքին է Հայաստանի լիզինգային շուկայի առաջատարը՝ Ակբա Լիզինգը, որի հետ աջակցությամբ հնարավոր է տարեկան 1% փաստացի տոկոսադրույքով եւ 10% կանխավճարով ձեռք բերել անհրաժեշտ տեխնիկա:

«Ակբա Լիզինգը եւ Sino Armenia-ն՝ ի դեմս «Պրո Դինամիկ» ՍՊԸ-ի, համագործակցում են երկար տարիներ: Այժմ պետական սուբսիդավորման ծրագրի շրջանակում առաջարկում ենք ձեռք բերել բեռնափոխադրման, շինարարության, արտադրության եւ տնտեսության այլ ոլորտների համար տեխնիկա ֆինանսավորման լավագույն պայմաններով՝ կանխավճար սկսած 10%-ից, փաստացի տոկոսադրույքը սկսած 1%-ից: Վստահ ենք, որ այս համագործակցությունը կնպաստի բիզնեսների եւ տնտեսության զարգացմանը»,-նշել է Ակբա Լիզինգի ներկայացուցիչ Աննա Գրիգորյանը:

«Այսօր կարող ենք վստահորեն փաստել, որ մեր կողմից ներկայացվող բոլոր ապրանքանիշերը մեծ ճանաչում ունեն շինարարության ոլորտում:Հայաստանում SDLG ապրանքանիշի միակ պաշտոնական ներկայացուցիչն ենք արդեն 12 տարի: SDLG-ն Volvo կոնցեռնի անդամ է, ինչը վկայում է որակի մասին, եւ հետեւաբար այս ապրանքանիշին փոխանցվել է Volvo-ի ամբողջ փորձը: Այս 10 տարիների ընթացքում Ակբա Լիզինգի ֆինանսավորման շնորհիվ վաճառել ենք հազարավոր միավոր շինարարական տեխնիկա ու սարքավորում: Միայն վերջին մեկ տարվա ընթացքում Ակբա Լիզինգի ֆինանսավորմամբ վաճառել ենք շուրջ 200 շինարարական տեխնիկա: Արդյունքը պայմանավորված է համատեղ վստահության, ինչպես նաեւ Ակբա Լիզինգի հուսալի գործընկեր լինելու հանգամանքով»,-նշել է «Պրո Դինամիկ» ՍՊԸ-ի տնօրեն Լուսինե Մխիթարյանը:

«Zoomlion-ը Չինաստանի խոշորագույն արտադրողներից մեկն է: Ընկերությունը ներկայացնում է սարքավորումների լայն տեսականի: Մեր ապրանքակազմը ներառում է բետոնային տեխնիկա, վերամբարձ կռունկներ, շինարարական սարքավորումներ, հանքարդյունաբերական ու ճանապարհաշինարարական տեխնիկա եւ այլն: Ուրախ ենք ներկայացված լինել Հայաստանում եւ մեր արտադրանքը ներկայացնել հայ սպառողին»,-նշել է Չինաստանի Zoozlion ընկերության տարածաշրջանային ղեկավար Չժանգ Բոն:

Ակբա Լիզինգի 100% բաժնետերը Ակբա բանկն է:

Ակբա Լիզինգը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

ՀԱՂԹՈՂԻՆ ՀԱՆՁՆԵՑԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՄՐՑԱՆԱԿԸ

Հայէկոնոմբանկը եւ Mastercard միջազգային վճարահաշվարկային համակարգը, ամփոփելով համատեղ արշավի արդյունքները, հանդիսավոր միջոցառման շրջանակում հաղթող քարտապանին հանձնեցին գլխավոր մրցանակը՝ 2 անձի համար ուղեւորություն դեպի ալի:

Մրցույթին մասնակցելու համար Հայէկոնոմբանկն իր Mastercard քարտապաններին առաջարկել է 20.11.2025 20.01.2026 թթ. կատարել միանվագ 20,000 դրամին համարժեք անկանխիկ վճարում AEB Mastercard վճարային քարտով: Յուրաքանչյուր գործարքի արդյունքում գեներացվել է անհատական կոդ եւ ուղարկվել քարտապաններին: Գլխավոր մրցանակի, ինչպես նաեւ խրախուսական 3 iphone 17 սմարթֆոնների հաղթող կոդերը պատահականության սկզբունքով ընտրվել են ս.թ. մարտի 12-ին Հայէկոնոմբանկի Facebook-յան էջի ուղիղ եթերում պատահականության սկզբունքով:

Մարտի 19-ին անցկացված միջոցառմանը ներկա էին Mastercard-ի եւ Հայէկոնոմբանկի ներկայացուցիչները, գլխավոր եւ խրախուսական նվերների հաղթող քարտապանները:

Բացելով միջոցառումը՝ Հայէկոնոմբանկի Մարքեթինգի բաժնի պետ Արման Տոնիկյանը նշեց, որ արշավի ամփոփման օրը պատահական չի ընտրվել. «Մարտի 19-ը Հաճախորդների միջազգային օրն է, եւ մենք եւս մեկ անգամ շնորհակալություն ենք հայտնում Հայէկոնոմբանկի հաճախորդներին, որ ընտրել են մեր Բանկը՝ որպես հուսալի գործընկեր: Այս արշավը եւս մեկ միջոց է մեր հաճախորդներին մեր շնորհակալությունը հայտնելու համար: Մենք իսկապես բարձր ենք գնահատում Mastercard-ի համագործակցությունը, որը հնարավորություն ստեղծեց արշավում հաճախորդներից բացի առանձին մասնակցությամբ ներգրավել նաեւ Հայէկոնոմբանկի աշխատակիցներին: Եւս մեկ անգամ ուզում եմ շեշտել, որ այս արշավի հաջողությունը թիմային աշխատանքի արդյունք է, եւ մենք շնորհակալ ենք բոլոր ստորաբաժանումներին արդյունավետ աշխատանքի համար»:

Mastercard-ի հայաստանյան ներկայացուցիչ Արսենյա Էլչյանը, շնորհակալություն հայտնելով արշավի բոլոր մասնակիցներին, նշեց, որ հաճախորդների շնորհիվ է, որ Հայէկոնոմբանկի հետ բոլոր մտահղացումները հաջողության են հասնում. «Մեր նպատակն է հաճախորդների համար ապահովել ոչ միայն արագ, ապահով եւ անվտանգ վճարումներ, այլ նաեւ պարգեւել հաճելի էմոցիաներ եւ անակնկալներ: Հենց դա է պատճառը, որ մենք ձգտում ենք շարունակել նման ակցիաները: Վերջին շրջանում Հայէկոնոմբանկի հետ Mastercard-ի համագործակցությունը հագեցած էր. թողարկվեց Mastercard World քարտը, որը հաճախորդներին նոր ճամփորդական առավելություններ է տրամադրում, ունեցանք նաեւ cashback-երի ակցիաներ, եւ, իհարկե, այս համատեղ արշավը, որը շատ լավ արդյունքներ արձանագրեց: Շարունակեք վճարել Mastercard-ի ձեր քարտերով ապահով եւ անվտանգ միջավայրում, եւ հաջորդ անգամ հենց Դուք կարող եք լինել հաղթող քարտապանը: Շնորհակալ ենք Հայէկոնոմբանկին արդյունավետ համագործակցության, վստահության, մեր գաղափարները կիսելու համար»:

Հայէկոնոմբանկի Հաճախորդների ներգրավման եւ պրոդուկտների զարգացման վարչության պետ Արտյոմ Բաղդասարյանն իր խոսքում նշեց, որ Հայէկոնոմբանկը բարձր է գնահատում Mastercard-ի հետ համագործակցությունը. «Այս տարիների ընթացքում մենք շոշափելի արդյունքներ ունենք՝ թե քանակական, թե որակական արտացոլմամբ: Մեր համատեղ թողարկած Mastercard World քարտատեսակն արդեն իսկ շատ լավ արձագանք ունի հաճախորդների շրջանում: Ճամփորդական առավելություններին զուգահեռ՝ քարտը հնարավորություն է տալիս նաեւ արտոնյալ պայմաններով վարկային միջոցներ ներգրավել: Mastercard World-ը պրոդուկտ է բոլորի համար՝ հասանելի սակագներով եւ շահավետ պայմաններով»:

Ելույթներին հաջորդեց մրցանակների հանձնման արարողությունը: Հաղթող քարտապանները հուզված էին եւ լի հաստատակամությամբ, որ նոր անակնկալների սպասումով շարունակելու են գործարքներ կատարել Հայէկոնոմբանկի վճարային քարտերով:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ՊԱՀՔԻ ՍԵՂԱՆ՝ ՁՐԵՐՈՎ ԿՈՆՖԵՏ

Պահքի շրջանում օգտագործում են բացառապես բուսական ծագում ունեցող սննդամթերք: Ուստի «Ժողովուրդ»-ը Մեծ պահքի ողջ ընթացքում կներկայացնի բուսական կերակրատեսակներ, որոնք կարելի է ուտել պահքի ժամանակ:

Ձրերով կոնֆետ

Նախ՝ կարեւոր է իմանալ, որ ձրերով կոնֆետը բավականին առողջարար է: Այն ամբողջությամբ պատրաստվում է ձրերով եւ մեղրով (պահքին մեղրը թույլատրվում է), քունջութի սերմեր կամ կոկոսի փաթիլներ, երբեմն էլ կարելի է ավելացնել ընկույզ, պնդուկ, գետնանուշ, նուշի հատիկներ, դդմի հատիկներ:

Ձրերով կոնֆետ պատրաստելու համար անհրաժեշտ է ձրերի տեսականի՝ թթու, քաղցր սալորի, ծիրանի, դեղձի, խնձորի, տանձի, թուզի, նարինջի, լիմոնի ձրեր, ջամիչ: Այս բոլորը լավ պետք է լվանալ, չորացնել եւ աղալ: Ազալուց հետո բոլորը խառնել իրար եւ ավելացնել մեղրը այնքան, որ զանգվածը իրար կպած պահի: Ցանկության դեպքում՝ ավելացնել մանրացված պնդուկը, գետնանուշը, ընկույզը, նուշի հատիկները, ավելացնել նաեւ դդմի հատիկները եւ նորից լավ խառնել, ապա տալ գնդիկաձեւ տեսք եւ պատել քունջութի սերմերով կամ կոկոսի փաթիլներով:

Եթե ցանկանում եք պահել տարայի մեջ առանց որեւէ ձեւ տալու, ապա կարող եք մեղրը շատ լցնել, այնքան, որ կծածկի զանգվածը:

Այս երկու տարբերակն էլ բավականին առողջարար են եւ ցանկալի է օգտագործել նախաճաշին:

Մի՛շտ հիշեք. պահքի ընթացքում հրաժարվում են ոչ միայն որոշակի կերակուրներից, այլեւ մոլի սովորություններից, շատախոսությունից, ստախոսությունից,հայհոյանքից եւ այլ մեղքերից: Կերակրից հրաժարվելն առանց մեղքից հետ կանգնելու՝անիմաստ ու անօգուտ է, որովհետեւ «սատանան միշտ պահքի մեջ է, ոչինչ չի ուտում, բայց մեղք գործելուց չի դադարում եւ չի հոգնում» (Սուրբ Գրիգոր Տաթեւացի):

Մի՛շտ հիշեք. պահք պահում ենք մենք մեզ համար, մեր մեղքերից, վատ սովորություններից ազատվելու համար, այլ ոչ ցուցադրության համար: Մատթեոս 6:16-18-ում գրված է. «Երբ ծոմ պահեք, տրտմերես մի լինեք կեղծավորների նման, որոնք իրենց երեսներն այլանդակում են, որպեսզի մարդկանց այնպես երեւան, թե ծոմ են պահում, ճշմարիտ եմ ասում ձեզ, այդ իսկ է նրանց վարձը, այսինքն՝ մարդկանց երեւալը եւ նրանցից գովվելը: Այլ երբ դու ծոմ պահես, օծի քո գլուխը եւ լվա քո երեսը, որպեսզի չերեւաս մարդկանց ծոմ պահող, այլ քո Հորը, գաղտնաբար, եւ քո հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ»:

ՄԱՐՔԱԿԱՆ

ՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Այս տարվա առաջին հանդիպումը Հայաստանի ազգային հավաքականն անցկացնելու է մարտի 29-ին սեփական հարկի տակ: Ընկերական խաղում հայ ֆուտբոլիստների մրցակիցը լինելու է Բելառուսը: Մարտի 26-ին Հայաստանի ընտրանին պետք է հյուրընկալվեր ԱՄԷ-ին, սակայն Միջին Արեւելքում տիրող լարված իրավիճակով պայմանավորված՝ այդ խաղը հետաձգվել է:

Այնպես որ, Եղիշե Մելիքյանն իր տրամադրության տակ ընդամենը մեկ հանդիպում կունենա նորեկներին փորձարկելու ու մյուս խաղացողների մարզավիճակին ծանոթանալու համար:

Հավաքականն արդեն 2 օր է՝ մարզվում է ֆուտբոլի ակադեմիայում եւ պատրաստվում է սպասվող դիմակայությանը:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒԺԵՂԱՑՎԻ



Real American Freestyle-ը տեղեկացրել է, որ Արման Ծառուկյան-Ջորջիո Պուլաս ռեւանշ մենամարտի ժամանակ կուժեղացվի անվտանգության կանոնների պահպանությունը:

RAF 7 մրցաշարը կայանալու է ամերիկյան Տամպայում մարտի 28-ի լույս 29-ի գիշերը:

Ծառուկյանն ու բլոգեր Պուլասը նույն մրցաշարում միմյանց հանդիպել էին շաբաթներ առաջ: Հաղթանակ տոնել էր հայ մարզիկը, որը մենամարտից անմիջապես հետո հարձակվել էր ոչ այդքան մարզական պահվածք ցուցաբերող մրցակցի վրա ու հարվածներ հասցրել նրան: Երկու կողմից հարթակ էին ելել նրանց թիմի անդամները, տեղի էր ունեցել վիճաբանություն:

«Մենք չենք կարող թույլ տալ այն ամենի կրկնությունը, ինչ եղավ նախորդ անգամ: Հարկավոր է ամեն ինչ վերահսկողության տակ պահել: Մրցավարին ու մարզիկներին հստակ կտեղեկացնենք, թե ինչ է կարելի, ինչ՝ ոչ: Եւս մեկ կռիվ մեր երեկոյում տեղի ունենալ չի կարող»,-ասել է RAF-ի ներկայացուցիչ Բեն Ասքրենը:

● *Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում մարտի 25-ին՝ ժամը 19:30-ին, կկայանա «Արծվաբույն» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Նախկին ամուսինս հեռադիտում է ինձ, վեճեր սարքում երեխայիս ներկայությամբ. ի՞նչ անեմ:

Անի Սիմոնյան, 33 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգման մասին» ՀՀ օրենքում հստակ լիազորություններ են սահմանվել ոստիկանության աշխատակիցների համար, որոնք Ձեր ահազանգի հիման վրա կարող են միջամտել իրավիճակի կարգավորմանը: Ընտանիքում բռնություն է համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքը, որը կատարվել է ընտանիքի անդամների միջեւ: Մասնավորապես, ֆիզիկական բռնություն են հանդիսանում ծեծելը (երկու եւ ավելի հարվածներ հասցնելը) եւ այլ բռնի գործողությունները, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը, իսկ հոգեբանական բռնություն է համարվում դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու սպառնալիքներ հնչեցնելը, դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ կատարելը, որոնք վախ են ներշնչում անձի մեջ իր անձի կամ ընտանիքի այլ անդամների անվտանգության առումով, արժանապատվության պարբերական նվաստացումը, սոցիալական ծայրահեղ մեկուսացումը, հողիության արհեստական ընդհատում կատարելուն հարկադրելը: Ձեր ամուսնու կողմից Ձեզ հետապնդելը, Ձեզ վիրավորելը, անհանգստացնելը, սպառնալիքներ հնչեցնելը, վեճեր սարքելը կարող է համարվել ընտանեկան բռնություն Ձեր անձի հանդեպ, որի մասին էլ կարող եք ահազանգել ոստիկանության հերթապահ մաս՝ 1-02 հեռախոսահամարով, եւ հայտնել կատարվածի մասին: Սակայն դա դեռեւս չի նշանակում, որ ոստիկանները անմիջապես պետք է քրեական գործ հարուցեն կամ քրեական պատասխանատվության ենթարկեն Ձեր ամուսնուն, այլ միայն կմիջամտեն, որպեսզի դադարեցվեն նրա կողմից կատարվող նման ոչ իրավաչափ գործողությունները: Ոստիկանության աշխատակիցները, նախ, բացատրություններ կվերցնեն երկու ամուսիններից, որից հետո Ձեր ամուսնուն կվերցնեն հաշվառման, որպեսզի մեկ տարի շարունակ ամեն ամիս պրոֆիլակտիկ զրույցներ անցկացնեն նրա հետ՝ հորդորելով հետագայում զերծ մնալ նման գործողություններից, իսկ եթե իրավիճակը լինի ավելի լարված, ապա ոստիկանությունը կարող է ավելի խիստ միջոցների անցնել: Մասնավորապես, ոստիկանության աշխատակիցները Ձեր ահազանգի հիման վրա իրավասու են կիրառել հետեւյալ միջամտություններից որեւէ մեկը՝ նախազգուշացումը, անհետաձգելի միջամտության որոշումը, պաշտպանական որոշումը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նախազգուշացումը կիրառվում է, երբ բռնության դեպքը կատարվել է առաջին անգամ. կատարված արարքը հանցագործություն չի համարվում:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Խանութից անհայտ կաթնամթերք եմ գնել, որի օգտագործումից ինֆեկցիոն վարակ ստացել է: Ի՞նչ անեմ եւ ո՞ւմ դիմեմ:

Գագիկ Աբրահամյան, 71 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ընդհանրապես, փաթեթավորված ցանկացած սննդամթերք գնելիս անհրաժեշտ է նախապես ուշադրություն դարձնել տվյալ ապրանքի վրա առկա գրառումներին: Ապրանք արտադրողը կամ այն վաճառողը պարտավոր է ժամանակին սպառողին տրամադրել ապրանքների վերաբերյալ անհրաժեշտ եւ ստույգ տեղեկատվություն, որն ապահովում է դրանց ճիշտ ընտրության հնարավորությունը, իսկ որոշ ապրանքների դեպքում՝ նաեւ սպառողի անվտանգությունը: Ապրանքների վրա պետք է պարտադիր կարգով եւ հայերեն լեզվով առկա լինեն տեղեկություններ ապրանքների հիմնական սպառողական հատկությունների մասին, իսկ սննդամթերքի համար տեղեկություններ բաղադրության, կշռի եւ ծավալի, կալորիականության, դրանցում առողջության համար վտանգավոր նյութերի պարունակության մասին, ինչպես նաեւ հիվանդությունների առանձին տեսակների դեպքում կիրառման հակացուցումներ, ապրանքների գինը եւ ձեռքբերման պայմանները, երաշխիքային ժամկետը, եթե այն սահմանված է կամ կարող է սահմանվել տվյալ տեսակի ապրանքի համար, կաթնամթերքի արտադրման վայրը, ապրանքների արդյունավետ եւ անվտանգ օգտագործման կանոնները եւ պայմանները, ապրանքների եւ հատկապես՝ կաթնամթերքի արտադրության եւ պիտանիության ժամկետները, ինչպես նաեւ նշված ժամկետների ավարտից հետո սպառողի անհրաժեշտ գործողությունների եւ, այդպիսի գործողությունների չկատարման դեպքում հնարավոր հետեւանքների մասին տեղեկությունները, եթե ապրանքները նշված ժամկետների ավարտից հետո վտանգ են ներկայացնում սպառողի կյանքին, առողջությանը եւ գույքին կամ իր նշանակությամբ օգտագործման համար դառնում են ոչ պիտանի:

(*Շարունակությունը՝ հաջորդ համարում*)

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Արտակարգ դեպք Գեղարքունիքում. սարից ձորը գլորված կնոջը դժվարությամբ փրկել են եւ տեղափոխել հիվանդանոց:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	0 + 5 + 8 + 11
	Կոտայքի լեռներ	0 + 4 + 7 + 10
	Կոտայքի նախալեռներ	+ 4 + 7 +10 + 13
	Գեղարքունիք	0 + 3 + 6 + 10
	Լոռի	+ 2 + 6 + 8 + 12
	Տավուշ	+ 2 + 5 + 9 + 11
	Արագածոտնի լեռներ	0 + 3 + 6 + 10
	Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 7 +10 + 14

	Արարատ	+ 4 + 8 +11 + 13
	Արմավիր	+ 6 + 9 +12 + 15
	Վայոց ձորի լեռներ	+ 1 + 4 + 6 + 10
	Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 9 +11 + 15
	Սյունիքի լեռներ	+ 1 + 3 + 4 + 7
	Սյունիքի նախալեռներ	+ 2 + 6 + 9 + 13
	Սյունիքի հովիտներ	+ 7 + 11 +14 +18
	Երեւան	+ 6 + 8 +12 +14

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **24.03.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*